600.0021.31.01.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2018 թվականի №21Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի №318Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով «ՌԱՊԻԴԱ» ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի հունվարի 12-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 12-ի «ՌԱՊԻԴԱ» ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Շորժա 1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №318Ա որոշման 2-րդ կետով հաստատված ԼԷ №0609 լիցենզիայի պայմանների՝

   1) 6-րդ կետում «999,68» թիվը փոխարինել «997,92» թվով,

   2) 7-րդ կետում «3124» թիվը փոխարինել «3024» թվով, իսկ «0.320» թիվը՝ «0.330» թվով:

2. «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը հինգ հազար երկու հարյուր դրամ գումարի չափով ազատել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված 2017 թվականի

հունիսի 27-ի №COD/0607 երաշխիքի համաձայն ստանձնած երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ գումարի երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՌԱՊԻԴԱ» ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
31 հունվարի 2018թ.